

Ժամկետանց վարկ և ժամկետանց տոկոս

- Վարկը կամ դրա մի մասը, ինչպես նաև հաշվարկված տոկոսագումարները համարվում են ժամկետանց, եթե պայմանագրով նախատեսված ժամկետներում չեն մարվել:
- Վարկը ժամկետանց անցնելու օրվանից դադարում է գործել վարկային պայմանագրի տոկոսադրույքը և վարկի օգտագործման տոկոսադրույքը հաշվարկվում է տվյալ օրվանից մինչև պարտավորության կատարման օրը՝ ըստ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:
- Վարկի դիմաց հաշվարկված տոկոսները ժամկետին չմարվելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է տույժ չմարված գումարի 0.4 %-ը:
- Վարկը կամ դրա մի մասը ժամկետին չմարվելու դեպքում յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար հաշվարկվում է տույժ՝ չմարված գումարի 0.2 %-ը:
- Արտարժույթով տրամադրված վարկերի տույժերը և տուգանքները վճարվում են ՀՀ դրամով՝ ԿԲ-ի կողմից հաստատված տվյալ օրվա համար արտարժույթի միջին փոխարժեքով:

Ուշադրություն.

Ձեր պարտավորությունները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու դեպքում Ձեր պարտքի վերաբերյալ տեղեկությունները կուղարկվեն վարկային ռեգիստր և վարկային բյուրո (աքոա):

Ուշադրություն.

Վատ վարկային պատմություն ունենալը Ձեզ համար հետագայում կարող է խոչընդոտ հանդիսանալ այլ վարկեր ստանալիս:

Ուշադրություն.

Ձեր կողմից գրավադրված գույքը (տունը, մեքենան կամ այլ) կարող է օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, եթե դուք ժամանակին չկատարեք Ձեր վարկային պարտավորությունները: